**Լիա Թևոսյան**
*Եվրասիա միջազգային համալսարանի*
*Իրավագիտության ամբիոնի հայցորդ*
*Էլ.հասցե՝* lia.tevosyan@eiu.am
DOI: 10.53614/18294952–2021.2–41

# ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հեղինակը, հաշվի առնելով գիտության և տեխնոլոգիայի զարգացման արդի միտումները թվային տնտեսության զարգացման դարաշրջանում, սույն հոդվածում անդրադարձ է կատարել մտավոր սեփականության օբյեկտների իրավական կարգավորմանն ու պահպանությանը սահմանադրաիրավական տեսանկյունից: Վերլուծության արդյունքում առաջարկվել է օրենսդրության ներդաշնակության նպատակով ՀՀ Սահմանադրության մեջ կատարել անհրաժեշտ լրացում:

**Հիմնաբառեր.** մտավոր սեփականություն, ինստիտուտներ, օբյեկտներ, սահմանադրություն, թվային տնտեսություն, գիտատեխնիկական առաջընթաց, ներդաշնակություն:

## Ներածություն

Արդի հասարակությունը «թվային տնտեսության» և «թվային հեղափոխության» հետ կապված նոր տեխնոլոգիական գլոբալանցման փուլում է: Դրա առանձնահատկությունները որոշվում են ոչ միայն տեխնոլոգիայի փոփոխություններով, այլև ոչ պակաս (եթե ոչ ավելին) հասարակության ինստիտուտների, ներառյալ՝ տնտեսական կազմակերպության ձևերով ու մոդելներով, պետական կառավարման կառուցակագերով, ինչպես նաև սոցիալական արժեքային համակարգերով ու գաղափարախոսություններով (Карцхия, 2019, էջեր 27–28):

Մարդկության կյանքի վրա էականորեն ավելանում է գիտական և տեխնոլոգիական առաջընթացի սիներգետիկ (պետահիրավական երևույթների գիտական ճանաչողության աջակցման) ազդեցությունը, որն էլ իր հերթին գիտելիքը նյութականացված տեխնոլոգիայում դարձնում է սոցիալական զարգացման ամենակարևոր գործոնը (Бирюков, 2015, էջ 103): Այս տեսակետից մտավոր սեփականության գիտական և գիտատեխնոլոգիական առաջընթացի պաշտպանությունը, նոր լույսի ներքո դիտարկումն ու իրավական կարգավորումը բոլոր պետությունների համար դառնում է ազգային անվտանգության գործոն և աշխարհում նկատվում է մտավոր սեփականության ինստիտուտի սահմանադրականացման միտում, որը առանցքային դեր է խաղում ազգային նորարարական տնտեսության ձևավորման մեջ (Кабыше, 2017, էջ 142):

Ազգային նորարարական տնտեսության ձևավորման գործում ներկայում էական նշանակություն ունեն մտավոր սեփականության առկա և նշմարվող նորարար օբյեկտների սահմանադրաիրավական բնութագրի բացահայտումը, ըստ ինստիտուտների տեսակավորումը՝ հաշվի առնելով նաև թվային տնտեսության ժամանակաշրջանի մարտահրավերները:

## Տեսական հիմքեր և մեթոդ

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ընդհանուր՝ ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, ֆորմալ-իրավական, կառուցվածքային-գործառնական մեթոդները, որոնց օգտագործումը հնարավորություն է տվել ոչ միայն ներկայացնել մտավոր սեփականության ինստիտուտների ընդհանուր օբյեկտների համակարգը, այլ նաև նորագույն զարգացումների համատեքստում դրանց սահմանադրաիրավական բնութագրերի սահմանման միջոցով նպաստել օրենսդրության ներդաշնակեցմանն ու կատարելագործմանը: Հեղինակն օգտվել է հայ և միջազգային իրավագետների ու տնտեսագետների հիմնարար աշխատություններից:

## Մտավոր սեփականության օբյեկտների համակարգը

Մարդկությանը հայտնի է մտավոր սեփականության ինստիտուտների ամենատարածված դասակարգման երկու խմբեր, որոնք են՝ 1) արդյունաբերական սեփականությունը և 2) գրական ու գեղարվեստական սեփականությունը (հեղինակային իրավունք): Երբեմն առանձնացվում է նաև երրորդ խումբը՝ մտավոր սեփականության ոչ ավանդական օբյեկտները: Միևնույն ժամանակ, արդյունաբերական սեփականությունը սովորաբար հասկացվում է որպես մտավոր սեփականության օբյեկտի իրավունքներ, որոնք կարող են օգտագործվել արտադրության, առևտրի, ծառայությունների մատուցման և այլ ոլորտներում, իսկ գրական և գեղարվեստական սեփականությունը վերագրվում է մտավոր սեփականության օբյեկտների իրավունքներին, որոնք ուղղված են մարդկանց հոգևոր կարիքների բավարարմանը: Օրինակ՝ ֆրանսիական մտավոր սեփականության օրենսգիրքը, ինչպես նշված է ՄՍՀԿ կայ-

քում, իր մեջ ներառում է մտավոր սեփականության իրավունքի երկու հիմնական ճյուղերը կարգավորող գործող օրենքների մեծ մասը՝ 1) արդյունաբերական սեփականությունը և 2) գրական և գեղարվեստական սեփականությունը (Рожковой, 2018, էջ 150):

Օրենսդրությունը համապատասխանաբար դասակարգում է օբյեկտները՝ ըստ վերը նշված ինստիտուտների տարանջատման, հաշվի առնելով նաև ազգային օրենդրության նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի առաջնահերթությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն Հայաստանում առաջին հերթին գործում է մտավոր սեփականության օբյեկտների փակ ցուցակի սկզբունքը, որոնց և Սահմանադրությամբ առաջնահերթ շնորհվում է իրավաբանական պաշտպանություն: Դրա համար էլ ՀՀ 2015թ-ի սահմանադրական բարեփոխումների 60-րդ հոդվածը նվիրվեց սեփականության իրավունքին, որի 7-րդ կետում նշված է, որ «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»: Չնայած նրան, որ պատմականորեն մտավոր սեփականության օբյեկտների ցանկը փոխվել է, տնտեսության զարգացման, հասարակության հետ կապերի և դրանց կարգավորվող իրավական նորմերի բարդացման հետ մեկտեղ, ի հայտ են եկել նոր օբյեկտներ, ինչպես օրինակ՝ օգտակար մոդելները, ինտեգրալի միկրոսխեմաների տոպոլոգիաները, շտեմարանները, օգտակար մոդելները, նոու-հաուն, արհեստական բանականությունը և այլն:

Այսպիսով, գեներացվում է երկու գաղափար. մտավոր սեփականության օբյեկտները պետք է լինեն պաշտպանված, և նրանց ցանկը օրենսդրությամբ պետք է սահմանված լինի հնարավորինս սպառիչ: ՀՀ-ում դա սահմանված է քաղաքացիական օրենսգրքով:

Պաշտպանության առումով կարող ենք նշել, որ Հայաստանում ստեղծված է մտավոր սեփականության պաշտպանություն նախատեսող անհրաժեշտ իրավական դաշտ, սակայն մտավոր սեփականությունը՝ որպես սեփականության հատուկ տեսակ թվային տնտեսության դարաշրջանում, սահմանադրական տեսության տեսանկյունից ունի սոցիալական կյանքի տարբեր ասպեկտների բարեփոխման անհրաժեշտություն:

Մարդկության կյանքում տեղի ունեցող հիմնարար որակական փոփոխությունների գիտական և գործնական ընկալման ու գործարարության զարգացման խորացման գործընթացը, չնայած առաջացող դժվարություններին, բախումնային ու ճգնաժամային վիճակներին, թույլ է տալիս հասնելու հասարակության և քաղաքակրթության հնարավորությունների և հեռանկարների միանգամայն նոր մակարդակի: Այս ամենն այնքան կարևոր է, որ եթե սա համարում ենք ապագայի գերխնդիրներից մեկը, ապա այսօր արդեն հրատապ է դառնում անցումը՝ խորը տեսական և ճանաչողական, համապարփակ իրավական, ինչպես նաև փիլիսոփայական, պատմական, տնտեսական, սոցիոլոգիական զարգացման:

Այսպիսով, պետք է փաստել, որ ՀՀ Սահմանադրության մեջ առկա չէ որևէ նշում մտավոր սեփականության ինստիտուտների, օբյեկտների վերաբերյալ:

Հաշվի առնելով մեր օրենսդրության և մտավոր սեփականության զարգացման միտումները, ըստ մեզ՝ պետք է սահմանադրական հաջորդ փոփոխություններում զարգացած իրավական համակարգ ունեցող երկրների նման սահմանադրաիրավական կարգավիճակ տալ մտավոր սեփականությանը:

## Թվային տնտեսությունը որպես մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանության առաջնահերթ մարտահրավեր և ինքնուրույն գործոն

«Թվային տնտեսություն» եզրույթն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Դոն Տապսկոտը 1994 թվականին լույս ընծայած իր «Թվային տնտեսություն» գրքում: ՀՀ Կառավարության «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» 11 փետրվարի 2021թ. N 183-Լ որոշման Հավելված N 1-ի համաձայն՝ թվայնացումը /Թվային փոխակերպումը բիզնես գործընթացների փոխակերպումն է էլեկտրոնային տարբերակի (Սարգսյան և ուրիշներ, 2020, էջ 35):

Մասնագիտական գրականությունում հաճախ կարելի է հանդիպել նաև այլ հարակից եզրույթների, այդ թվում՝ «նոր տնտեսություն», «ցանցային տնտեսություն», «հավելվածների տնտեսություն», «հետարդյունաբերական տնտեսություն», «համացանցային տնտեսություն» և այլն, որոնք ներկայանում են իբրև «թվային տնտեսության» հոմանիշներ (Սարգսյան և ուրիշներ, 2020, էջ 11):

Տնտեսության տարբեր ոլորտների իրավական կարգավորման նպատակով առկա է տնտեսական սահմանադրության լուրջ փոփոխության անհրաժեշտություն, չնայած նրան, որ ՀՀ սահմանադրական բարեփոխումներով տնտեսական համակարգի բաղադրիչներ են բովանդակում Սահմանադրության առանձին՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքական հիմնական նպատակները» վերտառությամբ 3-րդ գլխում ամրագրված նորմերը, նշված ոլորտներում, մասնավորապես՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներին նվիրված Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին կետում տնտեսական ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է ճանաչվում գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը: Այդ է փաստում նաև

Տնտեսական հարաբերությունների առանցքային հիմնահարցերը ոչ միայն կանոնակարգվում են Հանրապետության հիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» գլուխներում, այլև որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների դրսևորման ու պետության քաղաքականության կարևոր ոլորտ, ամրագրվում են նաև Սահմանադրության՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և

ազատությունները» գլխում (Այվազյան և ուրիշներ, 2016, էջ 172):

Լինելով Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առընչվող հայեցակետերի մասին TRIPS կոչվող համաձայնագրի վավերացնող կողմ Հայաստանը պարտավոր է ապահովել մտավոր սեփականության իրավական համակարգի ներդաշնակությունը, որը մեծ նշանակություն ունի բազային հասկացությունների փոխկապակցվածության հաստատման համար, հատկապես այն ժամանակ, երբ այդ ոլորտում հայտնվում են նոր հասկացություններ: Պայմանագիրը վերաբերում է մտավոր սեփականության հիմնական կատեգորիայի օբյեկտներին և սահմանում է մտավոր սեփականության իրավունքի ապահովման և պաշտպանման նոր ստանդարտները: TRIPS համաձայնագրի հիմնական նշանակությունը կայանում է նրանում, որ մտավոր սեփականության իրավունքի ապահովումը նպաստի նորագույն տեխնոլոգիաների խրախուսմանը, արտադրողների և սպառողների տեխնոլոգիական գիտելիքների փոխադարձ շահի ապահովման գործում նպաստի տեխնոլոգիայի փոխանցմանն ու տարածմանը, իրավունքների և պարտականությունների սոցիալ-տնտեսական բարեկեցությանն ու զուգակցման ներդաշնակությանը: Թվային տեխնոլոգիաների լայն կիրառումը, դրանց զարգացման պայթյունավտանգ բնույթը և թվային տնտեսության ձևավորումը հատկապես հրատապ են դարձնում այդ խնդիրը (Андреева, 2018, էջ 13):

Մտավոր սեփականության օբյեկտների սահմանադրաիրավական դերը սոցիալական առաջընթացի վրա մեծ ազդեցություն է ունենում, հաշվի առնելով մի շարք այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են թվային տնտեսության առաջացումն ու զարգացումը, որն էլ ազդում է իրավական ժողովրդավարական պետության հիմքերի, հիմնարար արժեքների և այդ հասկացությունների միջև ներդաշնակ փոխհարաբերությունների ձեռքբերման վրա (արտացոլում են դրանց ներդաշնակությունը), պահանջում է հասարակության կյանքի հիմնարար հիմնահարցերի նոր լուծում, որի մանրամասն պատասխանները հնարավոր են միայն ամբողջ հասարակության մասնակցությամբ, ինչպես նաև թվային տնտեսության համարժեք իրավական ձևակերպման խնդրի խորքային գիտական զարգացման արդյունքում: Ինչպես իրավացիորեն նշում է Անդրեևան, «թվային տնտեսություն» հայեցակարգը ներառում է տարբեր առցանց ծառայություններ, առցանց առևտուր, առցանց բանկային գործունեություն, առցանց գովազդ (Андреева, 2018, էջ 18): Մի շարք հեղինակներ էլ դրանց թվին են դասում նաև մեծ քանակությամբ մարդկանց կողմից նախագծերի ֆինանսավորումը (քրաուդֆանդինգ) և նմանատիպ այլ նորարար գործիքներ (Internal Market, Industry, Entrepreneurship and SMEs): Այս երևույթների իրավական կարգավորումն ուղղակիորեն ազդում է ինչպես սահմանադրության տնտեսության, այնպես էլ մտավոր սեփականության վրա:

## Եզրակացություն

Հաշվի առնելով թվային տեխնոլոգիաների նորանոր զարգացումներն ու լայն կիրառումը, դրանց զարգացման պայթյունավտանգ բնույթն ու թվային տնտեսության քայլ առ քայլ ձևավորումն ու զարգացումը, հրատապ է դառնում մտավոր սեփականության ինստիտուտների, օբյեկտների բնութագրերի վերաբերյալ սահմանադրաիրավական նորմերի ընդունումը: Իսկ դա պահանջում է փոփոխություններ Սահմանադրության մեջ, քանի որ մի կողմից առաջանում են նոր տեխնոլոգիաներ, մարդու իրավունքների իրականացման նոր սպառնալիքներ, իսկ մյուս կողմից ծագում են տնտեսության զարգացման նոր մարտահրավերներ՝ որպես հեռանկարային ուղղություն:

Հետազոտության արդյունքում վեր հանված մտավոր սեփականության օբյեկտների իրավական կարգավորման առանձնահատկությունների արդյունքում առաջարկվում է օբյեկտների ցանկը թողնել քաղաքացիական օրենսդրության թվարկմանը, սակայն մտավոր սեփականության ինստիտուտների ընդհանուր իրավական կարգավորումը, դրանց բնութագրի սահմանումը ապահովել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 7-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝ «Պետությունը ճանաչում և պաշտպանում է մտավոր և արդյունաբերական սեփականությունը՝ գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործությունները և արտադրության իրավունքները»:

## Օգտագործված գրականության ցանկ

*Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն* (փոփոխություններով) (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2015թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեով), Երևան, 2016:

*Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք,* ընդունված 05.05.1998, ՀՀՊՏ 1998.08.10/17(50) փոփոխություններով ու լրացումներով ԱԺ,26.05.2021, ՀՕ-220-Ն:

Այվազյան Ն. Ա., պատասխանատու խմբագիր (2016) *ՀՀ Սահմանադրական իրավունք*, առաջին մաս:

Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Մինասյան Կ., Մխիթարյան Ժ., Ջաքարյան Հ., (2020) *ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները/* –Եր.: ԵՊՀ հրատ., // Стрелкова И., Цифровая экономика: новые возможности и угрозы для развития мирового хозяйства, Экономика. Налоги. Право, №2, 2018 г., стр. 19, Watanabe C., Naveed K., Tou Y., Neittaanmäki P., Measuring GDP in the digital economy: Increasing dependence on uncaptured GDP, Technological Forecasting & Social Change, Volume 137, December 2018.

Андреева Г. Н. (2018) *Цифровая экономика, экономическая конституция и интеллектуальная собственность: сопряжение понятий*, DOI: 10.31249/prae/2018.01.01,

Право будущего: Интеллектуальная собственность, инновации, Интернет: Ежегодник. Вып. 1 / РАН. ИНИОН. Центр. социал. науч.-информ. исслед. Отд. правоведения; Каф. предпринимательского права МГУ им. М.В. Ломоносова; Отв. ред. Афанасьева Е. Г. – М.

Бирюков А. В., (2015) *К вопросу о влиянии научно-технического прогресса на международные отношения в цифровую эпоху,* Ежегодник ими выпуск 3 (13).

Карцхия А. (2019) *Цифровое право как будущее классической цивилистики.*

Кабышев С. В., (2017) *Интеллектуальная собственность всистеме конституционного строя: сравнительный анализ, Актуальные проблемы российского права.* № 9 (82) сентябрь. էջ 142 // Кабышев С. В., Усов Г. В. Конституционализация правового института интеллектуальной собственности (сравнительно-правовой анализ)// Юридический мир. 2014.

Рожковой, М. А. (2018) «*Цивилистическая концепция интеллектуальной собственности в системе российского права*: *Монография»* (под общ. ред.) («Статут»).

Internal Market, Industry, Entrepreneurship and SMEs. *European Commission.* https://ec.europa.eu/growth/access-finance-smes/guide-crowdfunding/what-crowdfunding/crowdfunding-explained_en

## References

*Hayastani Hanrapetutyan Sahmanadrutyun* [Constitution of the Republic of Armenia] (popoxutyunnerov) /yndunvel e 1995, hulisi 5-in, Sahmanadrutyan popoxutyunnery katarvel en 2005 noyemberi 27-i hanraqveov: Sahmanadrutyan popoxutyunnery katarvel en 2015 dektemberi 6-I HH hanraqveov/, Erevan, 2016 (In Arm.)

*Hayastani Hanrapetutyan Qaghaqaciakan orensgirq, yndunvats* 05.05.1998, HHPT 1998.08.10/17(50) popokhutyunnerov ev lracumnerov AJ,26.05.2021, HO-220-N, (In Arm.)

Ayvazyan N. A., pataskhanatu khmbagir (2016) *Constitutional Law of RA* , arajin mas. (In Arm.)

Sargsyan H., Gevorgyan R., Minasyan K., Mkhitaryan J., Zakaryan H., (2020) *The Issue of forming digital transformations institutional system of digital transformations of the RA economy* /-Yr.: YPH hrat., ej 11 // Strelkova I., Digital Economy: New Opportunities and Threats for the Development of the World Economy, Economy. Taxes. Right, №2, 2018 g., str. 19, Watanabe C., Naveed K., Tou Y., Neittaanmäki P., Measuring GDP in the digital economy: Increasing dependence on uncaptured GDP, Technological Forecasting & Social Change, Volume 137, December 2018. (In Arm.)

Andreeva G. N., (2018) *Digital Economy, Economic Constitution and Intellectual Property: Conjugation of Concepts,* DOI: 10.31249/prae/2018.01.01, Pravo budushchego: Intellektual'naya sobstvennost', innovacii, Internet: Ezhegodnik. Vyp. 1 / RAN. INION. Centr. social. nauch.-inform. issled. Otd. pravovedeniya; Kaf. predprinimatel'skogo prava MGU im. M.V. Lomonosova; Otv. red. Afanas'eva E.G. – M. (In Rus.)

Biryukov A. V., (2015) *To the question of the impact of scientific and technological progress on international relations in the digital age* , Ezhegodnik imi vypusk 3 (13). (In Rus.)

Karckhiya A., (2019) *Digital Law as the future of classical Civil Law, էջ 27-28* (In Rus.)

Kabyshev S. V., (2017) *Intellectual property in the system of the constitutional order: comparative analysis, Actual problems of Russian law.* № 9 (82) sentyabr'. էջ 142 // Kabyshev S. V., Usov G. V. Konstitucionalizaciya pravovogo instituta intellektual'noj sobstvennosti (sravnitel'no-pravovoj analiz) // YUridicheskij mir. 2014 (In Rus.)

Rozhkovoj M. A., (2018) *" Civilist intellectual concept property in the system of Russian law:* A monograph " (pod obshch. red.) ("Statut"). (In Rus.)

Internal Market, Industry, Entrepreneurship and SMEs. *European Commission.* https://ec.europa.eu/growth/access-finance-smes/guide-crowdfunding/what-crowdfunding/crowdfunding-explained_en (In Eng.)

**Лия Тевосян**
*Соискатель юридической кафедры*
*Международного университета Евразия*
*Эл. адрес: lia.tevosyan@eiu.am*

## НЕОБХОДИМОСТЬ ПОЛНОГО ЗАКРЕПЛЕНИЯ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ В КОНСТИТУЦИИ РА

Учитывая современные тенденции развития науки и технологий в эпоху развития цифровой экономики, автор в данной статье с конституционной точки зрения обращается к правовому регулированию и защите объектов интеллектуальной собственности.

В результате анализа было предложено внести необходимое дополнение в Конституцию РА с целью гармонизации законодательства.

**Ключевые слова:** интеллектуальная собственность, институты, объекты, конституция, цифровая экономика, научно-технический прогресс, гармония.

**Lia Tevosyan**
*PhD student at the Department of Law,*
*Eurasia International University*
*Email: lia.tevosyan@eiu.am*

## THE NEED FOR COMPLETE INTENTION OF INTELLECTUAL PROPERTY IN THE RA CONSTITUTION

In this article, the author, taking into account the current trends in the development of science and technology in the era of digital economy development, refers to the legal regulation and protection of intellectual property objects from a constitutional point of view.

As a result of the analysis, it was suggested to make the necessary addition to the RA Constitution with the purpose of harmonization of the legislation.

**Key words:** intellectual property, institutions, objects, constitution, digital economy, scientific and technical progress, harmony.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2021թ. հոկտեմբերի 1-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2021թ. հոկտեմբերի 20-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2021թ. նոյեմբերի 1-ին: